

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը «վճարողները» բառից հետո լրացնել «՝ բացառությամբ ԱՏԳԱԱ 2204 ծածկագրին դասվող խաղողի գինու արտադրություն իրականացնող հարկ վճարողների» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ մասում «վճարողները» բառից հետո լրացնել «՝ բացառությամբ ԱՏԳԱԱ 2204 ծածկագրին դասվող խաղողի գինու արտադրություն իրականացնող հարկ վճարողների» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 270-րդ հոդվածի 3-րդ մասը «սուբյեկտներն» բառից հետո լրացնել «՝ բացառությամբ ԱՏԳԱԱ 2204 ծածկագրին դասվող խաղողի գինու արտադրություն իրականացնողների,» բառերով:

Հոդված 4. Օրենքի 270-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր 4-րդ մասով.

«4. ԱՏԳԱԱ 2204 ծածկագրին դասվող խաղողի գինու արտադրություն իրականացնող ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտները չեն ազատվում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման պարտավորությունից:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը: